ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիայի Հայդելբերգի համալսարանում 2014թ. նոյեմբերի 3-ից 5-ը անցկացված վերապատրաստման դասընթացները կազմակերպվել էին *TEMPUS-VERITAS* ծրագրի շրջանակում, որն ուղղված է հետբուհական կրթության զարգացմանը Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխանելու միջոցով: Եվ Հայդելբերգի համալսարանը, որպես Գերմանիայի հնագույն հետազոտական համալսարան, համախմբել էր հայկական գործընկեր բուհերի ներկայացուցիչներին՝ կիսվելու հետբուհական կրթության կազմակերպման և հետազոտական աշխատանքների իրականացման հարուստ փորձով:

Վերապատրաստման ընթացքում եվրոպացի գործընկերները՝ Անգլիայի Բեթ Սպա համալսարանից, Իսպանիայի Ժիրոնայի համալսարանից, Գերմանիայի Հայդելբերգի համալսարանից, ներկայացրեցին իրենց բուհերում հետբուհական կրթության ավանդույթները, կիսեցին իրենց փորձը, որին հետևեցին Հայկական

բուհերի ներկայացուցիչների ելույթները: Յուրաքանչյուր բուհ ներկայացնում էր հետբուհական կրթության կազմակերպման և հետազոտական աշխատանքների իրականացման իր փորձը, ինչպես նաև ակնկալիքները ծրագրից:

Ակնկալվող վերջնարդյունքները

1. Համալսարանի ներուժի զարգացում որակյալ ասպիրանտական կրթության համար հետազոտական միավորների/ստորաբաժանումների վերանայում և նոր ստորաբաժանումների ստեղծում:
2. Որակյալ ասպիրանտական կրթության նախապայմանների ստեղծում:
3. Թեկնածուական կոչում շնորհելու չափանիշների ձևավորում և ասպիրանտական կրթության հիմնօրինակների մշակում:
4. Հայաստանում 11 ասպիրանտական նոր ծրագրերի մշակում և ներդրում:
5. Թեկնածուական կոչում շնորհելու չափանիշների և որակի ստանդարտների ընդունում:

Վերապատրաստման ընթացքում քննարկվող կարևոր հարցերից էր ճանապարհային քարտեզների մշակումը: Նախ, եվրոպացի գործընկերները ներկայացրեցին բուհերի կողմից լրացված հարցաշարերի արդյունքների վերլուծությունը, այնուհետև «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը ներ-կայացրեց հայկական բուհերի ներկայացուցիչների հետ ունեցած քննարկման արդյունքները և ձևավորվեց աշխատանքային խումբ՝ հետբուհական կրթության իրականացման ուղենիշների մշակման համար: